РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА
МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT
MINISTER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

0010, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ
Կառավարական տուն 3,
0010, г. Ереван, пл. Республики, Дом Правительства 3,
Government House 3, Republic Square,
Tel.: 589080 Fax: 523200
www.mud.am
E-mail:info@mud.am

08.06.09թ. N ՔԼ-15/2089

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար՝ պրն. Դ. Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն Հայասատանի Հանրապետության կառավարության տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի 2009 թվականի մայիսի 29-ի նիստի N Տ21-206 արձանագրության 1-ին կետի հանձնարարականի, կից ներկայացնում եմ «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի լրամշակված տարբերակը:

Առդիր՝ 14 թերթ և մեկ էլեկտրոնային կրիչ:

Հարգանքով՝ Վ. Վարդանյան

Դ. Սարգսյան

Ա. Հակոբյան
52 04 76

027-7857
09 06 09

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___»_____ 2009 թվականի N _____

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10.1 և 19-րդ հոդվածներին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Հաստատել քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորումն իրականացնում են՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը և պետական տարածքային կառավարման մարմինները,

2) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը հանդես է գալիս որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներում ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող նախագծային և շինարարական աշխատանքների պատվիրատու,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մինչև սույն կարգի ընդունումն առանձնացված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում գործում են քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգող համապատասխան իրավական ակտերով սահմանված նորմերը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը ապահովել սույն կարգով նախատեսված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում առկա գույքային միավորների և պատմամշակութային օբյեկտների վերաբերյալ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական անձնագրերով սահմանված տեղեկատվությամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հավելված

Հայաստանի Հանրապետության կառավարության

«___»_____ 2009թ. N _____ -Ն որոշման

ԿԱՐԳ

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների առաջադրման, վերջիններիս տարածքների առանձնացման և այդ տարածքներում քաղաքաշինական գործունեության կարգը:

2. **Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ՝ (այսուհետ՝ հատուկ կարգավորման օբյեկտներ) տարածքներ, որոնց զարգացումը, հատակագծումը, քաղաքացիների, հասարակության և պետության շահերի ապահովումն իրականացվում է օրենսդրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված հատուկ կանոնների և ընթացակարգերի անհրաժեշտությամբ և կիրառմամբ,

2) հատուկ կարգավորման օբյեկտների սահմաններ՝ տարածքը սահմանափակող պայմանական գծեր, որոնցից դուրս տարածքներում սույն կանոնները չեն գործում,

3) քաղաքաշինական հայեցակարգ՝ տարածքի քաղաքաշինական զարգացման հիմնարար գաղափար, որի իրականացման համար առաջարկվում են նպատակային համալիր միջոցառումներ,

4) ներդրումային հայեցակարգ՝ տարածքի զարգացման քաղաքաշինական հայեցակարգից բխող միջոցառումների իրականացման տնտեսական արդյունավետությունը հիմնավորող փաստաթուղթ,

5) քաղաքաշինական անձնագիր՝ քաղաքաշինական կանոնակարգերի և քաղաքաշինական օբյեկտի վերաբերյալ համակողմանի տեղեկատվություն պարունակող սահմանված ձևի փաստաթուղթ:

3. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման նպատակն է՝

1) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործընթացների կառավարման համար անհրաժեշտ իրավական բազայի ձևավորումը, քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգող հատուկ կարգերի և կանոնների սահմանումը,

2) քաղաքաշինական գործընթացներում պետական, հասարակական և անհատական իրավունքների և շահերի ներդաշնակումը,

3) քաղաքաշինության ոլորտում ներդրումային բարենպաստ պայմանների ստեղծումը,

2. ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄԸ

4. Հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացումը պայմանավորված է՝

1) պետական և հասարակության անվտանգության ապահովման,

2) ՀՀ բնակավայրերի և միջբնակավայրային տարածքների կայուն և հավասարակշռված զարգացման՝ ուրբանիզացման անհամաչափ պրոցեսների կանխման,

3) պատմականորեն ձևավորված կենսամիջավայրի, հայ ազգային ճարտարապետության ավանդույթների, պատմամշակութային ժառանգության պահպանման, վերականգնման և զարգացման,

4) պատմամշակութային հուշարձանների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության,

5) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման,

6) համապետական, համայնքային կամ միջհամայնքային կարևոր նշանակություն ունեցող սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման,

7) բնակավայրերի, սպասարկման և ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման և բնապահպանական հիմնահարցերի փոխկապակցված լուծման,

8) քաղաքաշինական, լանդշաֆտային և բնապատկերային արժեքների պահպանման,

9) արտակարգ իրավիճակների կանխման, հետևանքների վերացման կարևորությամբ և անհրաժեշտությամբ:

5. Հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացման առաջարկությունները ներկայացվում են գրաֆիկական և տեքստային մասերով:

6. Գրաֆիկական մասը ներկայացվում է բնակավայրի գլխավոր հատակագծի կամ տարածքի հանույթային հիմքի վրա, օգտագործելով նաև կադաստրային և հողաշինական քարտեզները: Վերջիններիս վրա ցույց են տրվում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների սահմանները:

7. Տեքստային մասում տրվում են՝

1) հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացման նպատակը,

2) առանձնացվող տարածքի ընդհանուր բնութագիրը և չափը,

3) հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական պլանավորման միջոցառումները:

Մեկից ավելի օբյեկտների առանձնացման դեպքում, առաջարկության տեքստային մասը կարող է ներկայացվել համապատասխան տեղեկատվություն պարունակող աղյուսակի տեսքով:

3. ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

8. Հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական զարգացման հիմնական փաստաթղթերն են՝

1) քաղաքաշինական և ներդրումային հայեցակարգերը,

2) գոտևորման և կառուցապատման նախագծերը,

3) հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական կանոնադրությունը և քաղաքաշինական անձնագիրը,

4) սահմանների նկարագիրը,

5) քաղաքաշինական փաստաթղթերի մշակման նախագծային առաջադրանքները,

6) առանձին օբյեկտների և համալիրների ճարտարապետա-շինարարական նախագծերը,

7) մրցութային փաստաթղթերը:

4. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը՝

1) Նախապատրաստում և սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացնում հատուկ կարգավորման օբյեկտների առաջադրման և տարածքների առանձնացման առաջարկությունները, և վերջիններիս քաղաքաշինական զարգացման հայեցակարգերը, ինչպես նաև այդ օբյեկտներում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերը:

2) Համակարգում է հատուկ կարգավորման օբյեկտների պլանավորման և կառուցապատման գործընթացները, այդ թվում՝

ա. քաղաքաշինական և ներդրումային հայեցակարգերի, քաղաքաշինական փաստաթղթերի, ներառյալ՝ քաղաքաշինական կանոնադրության մշակումը,
բ. քաղաքաշինական փաստաթղթերի նախագծման առաջադրանքների մշակումը,
գ. պետական բյուջեի միջոցներով իրականացվող նախագծային աշխատանքների կապալառուի ընտրության մրցույթների կազմակերպումը, մրցութային փաստաթղթերի նախապատրաստումը,
դ. հատուկ կարգավորմանն ուղղված իրավական և կազմակերպչական հարցերի, նախագծային փաստաթղթերի քննարկումների կազմակերպումը Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական խորհրդում,

3) Հատուկ կարգավորման օբյեկտներում համաձայնեցնում է՝

ա. քաղաքաշինական և ներդրումային հայեցակարգերը,
բ. գոտևորման և կառուցապատման նախագծերը,
գ. Հատուկ կարգավորման օբյեկտների սահմանների նկարագիրը,
դ. հողահատկացման առաջարկությունները,
ե. առանձին օբյեկտների կամ համալիրների ճարտարապետահատակագծային առաջադրանքները և նախագծային փաստաթղթերը,
զ. հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական կանոնադրությունը:

10. Պետական տարածքային կառավարման մարմնները՝ հատուկ կարգավորման օբյեկտներում համաձայնեցնում են սույն կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

5. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ

11. Հատուկ կարգավորման օբյեկտներում տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքաշինության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված գործառույթներն իրականացնում են սույն կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը համաձայնեցնելով պետական տարածքային կառավարման մարմինների և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության հետ:
12. Տեղական ինքնակառավարման մարմինները առաջարկությունները ներկայացնում են պետական տարածքային կառավարման մարմինների համաձայնեցմանը: Պետական տարածքային կառավարման մարմիններն առաջարկությունները ստանալուց հետո 5-օրյա ժամկետում իրենց եզրակացությամբ առաջարկությունները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն՝ համաձայնեցման:

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունն առաջարկությունները ստանալուց հետո 15-օրյա ժամկետում ներկայացնում է իր եզրակացությունը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել՝

- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1-րդ և 19-րդ հոդվածները,
- ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումներով ամրագրված քաղաքաշինության ոլորտի զարգացման ծրագրային դրույթները,
- ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ առանձնացնելու մասին» N 1500-Ն որոշման 3-րդ կետի հանձնարարականը:

Սույն որոշման նպատակը հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացման և այդ օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության կանոնակարգումն է:

Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման նպատակն է՝

- հատուկ կարգավորման ենթակա տարածքներում քաղաքաշինական գործընթացների կառավարման համար անհրաժեշտ իրավական բազայի ձևավորումը, քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգող հատուկ կարգերի և կանոնների սահմանումը,

-քաղաքաշինական գործընթացներում պետական, հասարակական և անհատական իրավունքների հետևողական պահպանությունը և ներդաշնակումը,

-տարածքների նպատակային զարգացման ապահովումը և ներդրումային բարենպաստ պայմանների ստեղծումը:

Որոշմամբ սահմանվում են՝

1. քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներում հատուկ կարգավորում իրականացնող մարմինները, վերջիններիս լիազորություններն ու գործառույթները,
2. քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացմանը ներկայացվող պահանջները,
3. քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքների զարգացման և կառավարման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը հատուկ կարգավորման ենթակա տարածքներում հանդես է գալիս որպես քաղաքաշինական գործընթացների համակարգող: ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողային պաշարների պետական կառավարման լիազոր մարմինները հատուկ կարգավորման տարածքներում պահպանում են տվյալ ոլորտում օրենսդրությամբ վերապահված իրենց իրավասությունները:

Պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքաշինության բնագավառում նույնպես պահպանում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիազորությունները՝ ՀՀ կառավարության կողմից սահմանած հատուկ կարգերի և կանոններին համապատասխան:

Հատուկ կարգավորման օբյեկտների տարածքային զարգացման և քաղաքաշինական պլանավորման փաստաթղթերը, ի թիվս օրենսդրությամբ սահմանած քաղաքաշինական փաստաթղթերի, գործնականում որպես նորույթ, ներառում են նաև քաղաքաշինական և ներդրումային հայեցակարգերի մշակումը, որոնք ըստ էության հատուկ կարգավորման միջոցառումների արդյունավետությունը հիմնավորող մինչնախագծային կարևորագույն փաստաթղթեր են հանդիսանում:

Սույն որոշման ընդունմամբ հատուկ կարգավորմանն առնչվող և քաղաքաշինական գործունեությունը կարգավորող ՀՀ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում և պահպանվում են այդ ակտերով սահմանված ընթացակարգերը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի ավելացման և նվազեցման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՑԱՆԿ

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

«Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԳՅՈՒՄՐԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԴԻԼԻՋԱՆ, ՋԵՐՄՈՒԿ, ԷՋՄԻԱԾԻՆ, ԱՇՏԱՐԱԿ, ԳՈՐԻՍ, ՏԱԹԵՎ, ՀԱԼԻՋՈՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՇՀԱՀԱԳՐԳԻՌԱՅԼՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	Դիտողություն, առաջարկություն, հեղինակը, ստացման ամսաթիվը	Դիտողության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն 21.04.2009թ. N 01/16/2249-09	Դիտողություններ, առաջարկություններ չկան	
2.	ՀՀ ֆինանսների նախարարություն 18.04.2009թ. N4/4-Ե-2-2640	Դիտողություններ, առաջարկություններ չկան	
3.	ՀՀ մշակույթի նախարարություն 04.05.2009թ. N02/1184	«Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները. 1. Որոշման նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետում «մարմինները» բառից հետո լրացնել «բացառությամբ պատմամշակութային օբյեկտների և պահպանական գոտիների տարածքների» բառերով 2. Որոշման հավելվածի նախագծի 8-րդ կետի 7-րդ ենթակետից հետո լրացնել նոր 8-րդ ենթակետով և շարադրել՝ «8) պատմամշակութային հիմնավորման նախագծեր» նախադասությամբ:	1. Չի ընդունվում, քանզի որոշման նախագծի հավելվածի 2-րդ կետով սահմանված է, որ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացումը պայմանավորված է այդ թվում նաև պատմամշակութային հուշարձանների պահպանության կարևորությամբ և անհրաժեշտությամբ: 2. Չի ընդունվում, քանի որ պատմամշակութային հիմնավորման նախագծերի մշակման լիազորությունը վերապահված է պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությանը:
4.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Դիտողություններ, առաջարկություններ չկան	
5.	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն 22.04.2009թ. N07.ԱԳ.09-1635	Դիտողություններ, առաջարկություններ չկան	
6.	ՀՀ Բնապահպանության նախարարություն 22.04.2009թ. N1-01/488	«Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի 10-րդ կետում «ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ» բառերից հետո ավելացնել «իսկ բնության հատուկ պահպանվող տարածքների մասով՝ ՀՀ բնապահպանության հետ» բառերը:	Չի ընդունվում, քանի որ «կարգով» պահպանվում է բնության հատուկ պահպանվող տարածքներին առնչվող ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը և քաղաքաշինական գործունեության իրականացման ընթացակարգերը:

7.	ՀՀ կառավարությանն առնքեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	Ինչ վերաբերվում է «Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Ջերմուկ, Էջմիածին, Աշտարակ, Գորիս, Տաթև, Հալիձոր համայնքներում (բնակավայրերում) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներն առանձնացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին, ապա մեր կարծիքով հիմնավորված չէ Գյումրի քաղաքի «Կումայի» արգելոցի պահպանման գոտում քաղաքին հարակից Մեղրաշատ, Բյուրական, Ողջի, Առափի և Հայկավան համայնքների վարչական սահմաններում գտնվող քաղաքացիների և համայնքային սեփականության հողերի ընդգրկումը / հավելվածներ N1 և N10/:	Համաձայն «Կարգի» 3-րդ կետի 2-րդ ենթակետի՝ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գլխավոր նպատակներից մեկը՝ քաղաքաշինական գործընթացներում պետական, հասարակական և անհատական իրավունքների և շահերի պահպանումը և ներդաշնակումն է և նշված տարածքների ընդգրկումը չի սահմանափակում վերջիններիս սեփականության իրավունքները:
8.	ՀՀ Շիրակի մարզպետարան 17.04.2009թ. N 1-01/1367	1. Գյումրի քաղաքի երկաթուղային հանգույցի տարածքն ամբողջությամբ ընդգրկել քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքների սահմանների մեջ: 2. Գյումրի քաղաքի Իսահակյան, Ալ. Մանուկյան, Աբովյան, Տեքստիլագործների և Չայկովսկու փողոցների միջև գտնվող բնակելի թաղամասերի տարածքը ևս ընդգրկել քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքների սահմանների մեջ:	Առաջարկությունները ընդունվել են: Նոր տարածքների հարցը կքննարկվի Գյումրու քաղաքապետարանի հետ: Անհրաժեշտ հիմնավորումների առկայության դեպքում դրանք լրացուցիչ կնդգրկվեն քաղաքի հատուկ կարգավորման օբյեկտների ցանկում:
9.	ՀՀ Սյունիքի մարզպետարան 20.04.2009թ. N05-942	Դիտողություններ, առաջարկություններ չկան	
10	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան 22.04.2009թ. N Ս-1-1.1-216	Դիտողություններ, առաջարկություններ չկան	
11.	ՀՀ Արագածոտնի մարզպետարան 21.04.2009թ. N773	Դիտողություններ, առաջարկություններ չկան	
12.	ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան 17.04.2009թ. N 421	Դիտողություններ, առաջարկություններ չկան	
13.	ՀՀ Լոռու մարզպետարան 20.04.2009թ. N 1008-2	Դիտողություններ, առաջարկություններ չկան	
14.	ՀՀ Արարատի մարզպետարան 23.04.2009թ. N 030/765	Դիտողություններ, առաջարկություններ չկան	
15.	ՀՀ Տավուշի մարզպետարան 22.04.2009թ N836-01/26	Դիտողություններ, առաջարկություններ չկան	
16.	ՀՀ Արմավիրի մարզպետարան 21.04.2009թ. N 921	Դիտողություններ, առաջարկություններ չկան	
17.	ՀՀ Կոտայքի մարզպետարան 28.04.09թ. N01/11/1131-09	Դիտողություններ, առաջարկություններ չկան	

AMPOP.

18	ՀՀ արդարադատության նախարարություն 21.05.09թ. N Ն2721	1. Որոշման նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետի վերաբերյալ հայտնում ենք, որ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները քաղաքաշինության բնագավառում սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Քաղաքաշինության մասին»ՀՀ օրենքներով: Այդ առումով ՀՀ կառավարությունը չի կարող հանձնարարականներ տալ տեղական ինքնակառավարման մարմիններին, նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 107-րդ հոդված պահանջները: Նույն դիտողությունները վերաբերվում են նաև որոշման նախագծով հաստատվող հավելվածի 10-րդ կետին:	1. Ընդունվել է և կատարվել համապատասխան փոփոխություններ:
		2. Որոշման նախագծի 2-րդ կետի նույն ենթակետի կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի համաձայն խոսքը պետք է գնա հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգի մասին:	2. Որոշման նախագի հավելվածի 3-րդ կետով սահմանված է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման նպատակը, ըստ որի յուրաքանչյուր հատուկ կարգավորման օբյեկտ պետք է ունենա իր առանձնահատկություններին համարժեք մոտեցում և ըստ այդմ՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված քաղաքաշինական գործունեության իրականացման կարգ: Այս առումով սույն որոշման նպատակը նշված գործառույթների իրականացման համար անհրաժեշտ իրավական նախապայմանների ստեղծումն է:
		3. Որոշման նախագծի նույն կետի 3-րդ ենթակետում պարզ չէ, թե որ համապատասխան իրավական ակտերի մասին է խոսքը:	3. Ընդունվել է և կատարվել համապատասխան լրացում:
		4. Որոշման նախագծի 3-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ նկատի ունենալով ՀՀ Նախագահի 2007թ. հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի պահանջները, ՀՀ կառավարությունը հանձնարարականներ է տալիս ոչ թե պետական կառավարման մարմիններին, այլ այդ մարմինների ղեկավարներին: Որոշման նախագծով հաստատվող հավելվածի նույն կետում անհրաժեշտ է հստակ նշել, թե ինչ տեղեկատվության մասին է խոսքը:	4. Ընդունվել է և կատարվել համապատասխան փոփոխություններ:

		5. Որոշման նախագծով հաստատվող հավելվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերը կրկնում են «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի դրույթները:	5. Չի ընդունվում , քանի որ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չեն սույն որոշման նախագծի հավելվածում օգտագործվող հիմնական հասկացությունները /տես՝ կետ 2/ և քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման նպատակը /տես՝ կետ 3/: Ինչ վերաբերվում է որոշման նախագծի հավելվածի 4-րդ կետին, ապա վերջինիս անհրաժեշտությունն ուղղակիորեն պայմանավորված է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գաղափարը բովանդակային առումով ամբողջական ներկայացնելու նպատակահարմարությամբ:
		6. Որոշման նախագծով հաստատվող հավելվածի 9-րդ կետի 3-րդ ենթակետով անհրաժեշտ է հստակ նշել, թե այդ կետի պարբերություններով նախատեսված դրույթը հատուկ կարգավորման օբյեկտներում ում հետ են համաձանեցվում և ինչ ժամկետում:	6. Ընդունվել է և կատարվել համապատասխան լրացում:
		7. «Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Ջերմուկ, էջմիածին, Աշտարակ, Գորիս Տաթև, Հալիձոր համայնքներում /բնակավայրերում/ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներն առանձնացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի 10-րդ հավելվածի աղյուսակի 7-րդ սյունակը և աղյուսակից հետո նախատեսված «ծանոթությունն» անհրաժեշտ է հանել, նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 12-րդ մասի պահանջները»:	7. Ընդունվել է և կատարվել համապատասխան փոփոխություն:

19.	Արդարադատության նախարարություն 04.06.09թ. N ԵՀ2995	1. Որոշման նախագծով հաստատվող հավելվածի 4-րդ կետը կրկնում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի դրույթները:	1. Չի ընդունվում, քանի որ որոշման նախագծով հաստատվող հավելվածի 4-րդ կետով սահմանվում են հատուկ կարգավորման օբյեկտների տարածքների առանձնացման պահմանները, որոնք թվարկվող գործոններով և բովանդակությամբ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի դրույթների կրկնությունը չեն: Բացի այդ նշված կետի անհրաժեշտությունն ուղղակիորեն պայմանավորված է նաև քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գաղափարը բովանդակային առումով ամբողջական ներկայացնելու նպատակահարմարությամբ:
		2. Որոշման նախագծով հաստատվող հավելվածի 9-րդ կետի 1-ին ենթակետում պարզաբանման կարիք ունի «հատուկ կարգերի» բառերը:	2. Ընդունվել է և խմբագրվել
		3. Որոշման նախագծով հաստատվող հավելվածի 9-րդ կետի 3-րդ ենթակետում և 10-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել, թե այդ կետի 3-րդ ենթակետի պարբերություններով և 10-րդ կետով նախատեսված դրույթները հատուկ կարգավորման օբյեկտներում ում հետ են համաձայնեցվում և ինչ ժամկետներում:	3. Ընդունվել է և կատարվել համապատասխան լրացումներ
		4. Որոշման նախագծով հաստատվող հավելվածի 12-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել, թե որոնք են մերժման հիմքերը:	4. Ընդունվել է և խմբագրվել
		5.«Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Ջերմուկ, Էջմիածին, Աշտարակ, Գորիս, Տաթև, Հալիձոր համայնքներում (բնակավայրերում) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներն առանձնացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

N ---------- « 25» 04 2009թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ - ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավական ակտի փաթեթը կազմված է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների պահանջներին համապատասխան:

Իրավաբանական բաժնի պետ՝ Գ. Սարոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
MINISTER OF JUSTICE OF THE REPUBLIC OF ARMENIA
ք. Երևան Հալաբյան 41/Ա
Հեռ. 380-389

«04» «06» 2009 թ. N Ա-2995

Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության նախարար
Պարոն Վ. Վարդանյանին

Հարգելի պարոն Վարդանյան,

Կից ներկայացնում ենք «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» և «Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Ջերմուկ, Էջմիածին, Աշտարակ, Գորիս, Տաթև, Հալիձոր համայնքներում (բնակավայրերում) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներն առանձնացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Հարգանքով՝ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության վարչություն

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» և «Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Ջերմուկ, Էջմիածին, Աշտարակ, Գորիս, Տաթև, Հալիձոր համայնքներում (բնակավայրերում) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներն առանձնացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերի վերաբերյալ

«Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ

1. Որոշման նախագծով հաստատվող հավելվածի 4-րդ կետը կրկնում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի դրույթները:

2. Որոշման նախագծով հաստատվող հավելվածի 9-րդ կետի 1-ին ենթակետում պարզաբանման կարիք ունի «հատուկ կարգերի» բառերը:

3. Որոշման նախագծով հաստատվող հավելվածի 9-րդ կետի 3-րդ ենթակետում և 10-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել, թե այդ կետի 3-րդ ենթակետի պարբերություններով և 10-րդ կետով նախատեսված դրույթները հատուկ կարգավորման օբյեկտներում ում հետ են համաձայնեցվում և ինչ ժամկետներում:

4. Որոշման նախագծով հաստատվող հավելվածի 12-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել, թե որոնք են մերժման հիմքերը:

5. «Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Ջերմուկ, Էջմիածին, Աշտարակ, Գորիս, Տաթև, Հալիձոր համայնքներում (բնակավայրերում) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներն առանձնացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ՝ **Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ**

Իրավական ակտերի փորձաքննության վարչության պետ՝ **Կ. ԽՏՐՅԱՆ**